

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

22.05.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Վ. Գևորգյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ. Դոխոյանը, Ս. Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. ա) ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ կրթության և գիտության նախարարների Լոռու մարզ կատարած այցի մասին
բ) Լեռնային Ղարաբաղ կատարվելիք այցի մասին
գ) Լոռու մարզի և Աջարիայի Հանրապետության համագործակցության մասին
դ) Համապետական շաբաթօրյակի նախապատրաստական աշխատանքների մասին /Ա. Նալբանդյան
2. ա) Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
բ) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի Լոռու մարզ կատարած այցի մասին /Զեկ.Ն.Սարգսյան/
3. «Մաքուր-Հայաստան» ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին / Զեկ.Հ.Թադևոսյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին / Զեկ.Հ.Պապոյան/
5. ա) Վերջին դասի միջոցառումների մասին
բ) Քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին / Զեկ.Մ.Սայադյան/
6. Մարզի ճանապարհների վիճակի և Մ-6 Վանաձոր-Ալավերդի հատվածի շինարարական աշխատանքների ընթացքի մասին / Զեկ.Վ.Գևորգյան/
7. Ամառային զորակոչի աշխատանքների մասին / Զեկ.Ս.Ղուբաթյան/
8. Երեխաների պաշտպանության օրվան նվիրված նախապատրաստական աշխատանքների մասին / Զեկ.Ս.Խեչումյան/
9. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին

10. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ. Թադևոսյանին`

ՀՀ գյուղատնտեսության ու ՀՀ կրթության և գիտության նախարարի այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն գյուղատնտեսության ոլորտի խնդիրների վերհանման և դրանց համալիր լուծման նպատակով անհրաժեշտ քննարկումներ կազմակերպել շահագրգիռ կազմակերպությունների , հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Ակտիվ մասնակցություն ունենալ համապետական շաբաթօրյակին, այդ նպատակով ներգրավել նաև մարզի տարբեր կազմակերպա-իրավական բնույթի կազմակերպություններին:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ս. Խեչումյանին`

Ամփոփել և ներկայացված առաջարկությունների հիման վրա կազմված ծրագրերի համաձայն ակտիվ մասնակցություն ցուցաբերել երեխաների իրավունքների պաշտպանության օրվա միջոցառումներին:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Զանազյանին`

Լոռու մարզի հրատապ ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ գործընթացները /այդ թվում գնումների և մրցույթների անցկացման / կազմակերպելու համար նախապատրաստական աշխատանքներ իրականացնել և վերահսկել դրանց օրինական իրականացման ընթացքը:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել «Վերջին դասի» միջոցառումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների պատշաճ կազմակերպման և անցկացման նկատմամբ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Զանազյանին`

Մարզի ճանապարհաշինական կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունները պատշաճ, որակյալ ու ժամանակին կատարելու նպատակով շրջաբերական գրություններ ներկայացնել և վերահսկել նրանց կողմից իրականացվող աշխատանքները:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԶԱՆԱԶՅԱՆ